ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԹԻՎ 8 «ՈՍՏԱՆ» ՄՍՈՒՐ-
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ
ՀՀ, 1104, Արագածի 21
Հեռ. +374 (231) 41990
Էլ. փոստ: tiv8vostanmsur-mankapartez@mail.ru

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЭРИЯ
ГОРОДА ВАГАРШАПАТ
ДЕТСКИЙ САД-ЯСЛИ N8
"ВОСТАН" ОНО
РА, 1104,Аратац 21
Тел.: +374 (231) 41990
Эл.почта: tiv8vostanmsur-mankapartez@mail.ru

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, MUNICIPALITY OF VAGHARSHAPAT VOSTAN N8
KINDERGARTEN and NURSERY CNPO
Address: Aragats 21, 1104, Tel. +374 (231) 41990, E-mail: tiv8vostanmsur-mankapartez@mail.ru

№ 126

«01» հուլիսի 2026 թ.

«ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ս. ԱԶԱՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ազատյան,

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 8 «Ոստան» մսուր – մանկապարտեզ ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2026 թվականի ապրիլի 15-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ՈՍՏՄՊ ԳՀԱՊՁԲ 26/2-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը:

2026 թվականի հունիսի 30-ին Գնորդը ստացել է Ձեր գրությունն առ այն, որ Վաճառողը հրաժարվում է մատակարարել պայմանագրի 21-րդ, 44-րդ և 59-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքները:

Ելնելով վերոգրյալից՝ Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 8 «Ոստան» մսուր – մանկապարտեզ ՀՈԱԿ-ը, հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 15-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ՈՍՏՄՊ ԳՀԱՊՁԲ 26/2-4» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը, 2026 թվականի հուլիսի 2-ից մասնակի միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը 21-րդ, 44-րդ, 59-րդ և 59-րդ չափաբաժինների մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:

ՏՆՕՐԵՆ՝ Է.ԱՎԱԳՅԱՆ